5. Հանձնաժողովը որոշեց.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ <<ԵՐԵՎԱՆԻ ՀՐՇԵՋ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ –ին:

Որոշում թիվ 5.1

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները և ցածր գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6. Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 9-րդ 4-րդ մասի 2-րդ կետը անգործության ժամկետ չի սահմանվում :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ս. Թադևոսյան
Անդամներ՝		Լ. Գալուստյան
		Ն. Լալայան
Քարտուղար՝		Վ. Գասպարյան